Շուշանիկ Կուրղինյան

Կռվից հետո

Շրջում էր քամին ամայի կիրճում ու վայրագ երգով աշխատում վանել սարսափն իր սրտի: Նա լսեց հանկարծ մի մեղմ հեծկլտոց, կռացավ, տեսավ սիրուն մի ծաղիկ լալիս է թաքուն.

Քուն չունե՞ս, աղջի՛կ, գիշեր է, քնի՛ր, մի՛ լար, նազելի . . .

Եղբա՛յր, քարափից վայր գլորվեցին արյունոտ դիեր, տե՛ս, մեկն էլ ահա ընկել է կրծքիս, տնքում է անլուռ ու մորը կանչում . . . ինքը քուն չունի՝ իմ քունն է կտրել . . . ասա գեթ թեքվի մի քիչ շունչ քաշեմ . . .

Քամին լուռ չոքեց դիակի առաջ և պաղ թևերով գրկեց գլուխը տաք և արյունոտ ու լալով լացեց . . .

Դե՛հ, մի քիչ կամաց, տրտնջաց առուն:

Ի՞նչ ցասման գիշեր . . . դիակներ ընկա՞ն:

Իմ կրծքի վրա . ուղիս կորցրած սողում եմ առաջ թե ո՞ր չգիտեմ . . .

Վա՛յ, վա՛յ, վայեց բուն, ոճիրն ու մութը գրկել են իրար: Երևի դևը ունի խրախճանք:

Գորտն էլ տաք ճահճից քնահատ և դժգոհ կռռաց ու լռեց:

Ուռին սարսռաց անհայտ սոսկումից

Գլուխը կախեր ջրերի վրա . . .

Այս ի՞նչ աղմուկ կա այսօր ձորի մեջ, հարցրեց նրան աստղ մի սիրունիկ, որ գլորվում էր հստակ առվակում:

Մարդիկ են ընկել . . .

Մարդի՞կ . . .

Հա՛ . . .

Ի՞նչ մարդիկ:

Այն, որ ապրում են երկրիս վրա ուժեղ ու հզոր, տեր ու տիրական . . .

Հա՛, դեհ, ցույց տուր, շուտ, ինձ չէ պատահել մոտ լինել նրանց:

Մի՛ նայիր, աստղիկ . . .

Ուզում եմ նայել:

Նոքա մեռած են . . .

Ի՞նչ բան է մեռնել:

Մեռնել՝ չքանալ . . .

Ա՛խ, խորամանկներ, ինչ բաներ գիտեն . պիտ նայեմ, ուռիկ . վաղը թող աատմեն, որ երազի մեջ վառ աստղ են տեսել:

Ավա՛ղ, չեն պատմի . . .

Ինչո՞ւ, լավ չէ՞ այդ:

Նոքա հոշոտված դիեր են, զավակս . . .

Տե՛ս ագռավներն էլ աչքերն են կտրել . . .

Աստղիկը ճչաց ու թռավ երկինք .

Ո՞վ է խանգարում կես գիշերային անդորրը երկնի, դուրս լողաց խոժոռ լուսնկան իսկո ւյն ու դժգոհ նայեց շուրջը դես ու դեն:

Մա՛յր, վախենում եմ, եկ ինձ մոտ քնիր, աստղիկն էր լալիս սարսափից շշմած:

Ի՞նչ է պատահել, հուր-հերս, պատմիր:

Մա՛յր, երկրում մարդիկ . . .

Դե՛հ, լռի՛ր-լռի՛ր, կանչեց լուսնկան, ամպերով իսկույն ծածկեց աստղիկին, նայեց հեգնանքով դեպի վար երկիր ու նուրբ նազանքով մտավ ամպի տակ . . .

1913 թ. 11 փետրվարի